ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 26-ի N 8-Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 5-րդ և 14-րդ ենթակետերով և քննարկելով պրոռեկտոր Արա Երեմյանի հաղորդումը օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների համար ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացների իրականացման մասին հարցը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Օտարերկրյա կրթական հաստատությունների և ՀՊՄՀ-ի միջև ձեռք բերվող պայմանավորվածությունների հիման վրա, օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների համար ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում իրականացնել ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացներ:
2. Օտարերկրյա կրթական հաստատությունների սովորող ունկնդրի համար ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում ուսումնառության ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացների յուրաքանչյուր օրվա համար սահմանել վարձավճար 38000 (երեսուն ութ հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշման 2-րդ կետը չի տարածվում ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում՝ միջազգային կրթական ծրագրերով և փոխադարձության սկզբունքով սովորող ունկնդիրների վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ